

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՐՉԵՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՍՏԱՑԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Ներածություն

Մտավոր սեփականության իրավունքի հարցերով միջազգային հեղինակավոր հարթակներում¹ ներկայումս լայնորեն քննարկվում են, այսպես կոչված, *ինքնավար* արհեստական ինտելեկտի *ստացած (ձեռք բերած) արդյունքներին*² մտավոր սեփականության իրավունքի ինստիտուտների ներքո իրավական պաշտպանություն տրամադրելու նպատակահարմարության, հնարավորության և թույլատրելիության հարցերը: Խոսքն այնպիսի արդյունքների մասին է, որոնք նման են, համադրելի, իսկ որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում են մարդու ստեղծած գրականության, արվեստի կամ գիտության բնագավառի ստեղծագործությունները: Տվյալ դեպքում արհեստական ինտելեկտը (այսուհետ՝ ԱԻ) օգտագործվում է ոչ թե որպես գործիք մարդու կողմից որոշակի ստեղծագործություն արարելիս, այլ ծրագրավորողի սահմանած պարամետրերին համապատասխան ստացած տվյալներից *սովորելով*³ ԱԻ-ն նոր արդյունք է ստանում՝ ինքնուրույն որոշումներ կայացնելով այդ ողջ գործընթացում³: Դա հնարավոր է տեխնոլոգիական ձեռքբերումներ համարվող խորը մեքենայական ուսուցման, արհեստական նյարդային ցանցերի օգտագործման և մեզատվյալների հասանելիության շնորհիվ⁴: ԱԻ-ն ստանում է արդյունքներ, որոնք ակնհայտ

¹ Օրինակ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը, Մտավոր սեփականության պաշտպանության միջազգային ասոցիացիան և այլն:

² Արևմտյան մի խումբ հեղինակներ օգտագործում են *ինքնավար արհեստական ինտելեկտի ստեղծած աշխատանքներ* ձևակերպումը: Մենք կարծում ենք, որ ներկայիս սերնդի արհեստական ինտելեկտի պայմաններում ավելի ճիշտ է օգտագործել *առավելազույն ինքնավարություն ունեցող արհեստական ինտելեկտի ձեռք բերած կամ ստացած արդյունքներ* ձևակերպումը, քանի որ այս դեպքում ևս մարդու միջամտությունն արդյունքի ստացմանն առկա է, սակայն այն նվազագույն է և չի հասնում ստեղծագործական մակարդակի: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **S. Դավթյան**, Արհեստական ինտելեկտի ազդեցությունը հեղինակային իրավունքի օրենսդրական քաղաքականության վրա. մարտահրավերներ և արձագանք, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», № 3, 2020, էջ 34-56:

³ Տե՛ս, օրինակ, **Andres Guadamuz**, *Artificial intelligence and copyright*. WIPO Magazine, October 2017, https://www.wipo.int/wipo_magazine/en/2017/05/article_0003.html

⁴ Օրինակ՝ ԱԻ-ն է ստացել «Հայրիկի ավտոմեքենան» երգի երաժշտությունը, տե՛ս *It Happened: "Daddy's Car" Is a Song Created By Artificial Intelligence, 2016*, <https://www>.

ստեղծագործական արտահայտություն ունեն և բխում են ծրագրի գործողությունից, սակայն չեն կարող համարվել ուղղակիորեն մարդկային աղբյուրից ստացված⁵:

Սույն հոդվածում *ԱԻ ստացած կամ ձեռք բերած արդյունքներ* ասելով՝ նկատի ունենք առավելագույն ինքնավարությամբ ԱԻ ձեռք բերած արդյունքները, և վերլուծվում են դրանց հնարավոր իրավական պաշտպանության տրամադրման հարցերը: Քննարկվում է, թե արդյոք անհրաժեշտ և հիմնավոր է ԱԻ ստացած արդյունքներին իրավական պաշտպանություն տրամադրելը տեխնոլոգիական զարգացման այս փուլում, և եթե այո, ապա հնարավոր է արդյոք ապահովել նման պաշտպանությունը մտավոր սեփականության իրավունքի ինստիտուտների, տվյալ դեպքում՝ հարակից իրավունքների ինստիտուտի շրջանակում: Վերլուծվում են այդ կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ տեղ գտած հիմնական դիրքորոշումներն ու առաջարկությունները:

ԱԻ ստացած արդյունքներին իրավական պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտությունը մասնագիտական գրականության մեջ հիմնականում քննարկվում է մտավոր սեփականության իրավափոխության տեսությունների համատեքստում, դրա տնտեսական ասպեկտների և տեխնոլոգիաներում ներդրումների խրախուսման տեսանկյուններից: Մտավոր սեփականության երկու հիմնարար իրավափոխության տեսություններում ԱԻ արդյունքներին իրավական պաշտպանություն տրամադրելու ուղղակի նախադրյալները բացակայում են:

Աշխատանքի տեսությունը (Labor Theory), որը հիմնված է Ջոն Լոքի բնական իրավունքի տեսության վրա, ելնում է այն գաղափարից, որ աշխատանքը ստեղծում է արժեք, և անձը, որը դրան ծնունդ է տվել, պետք է վայելի այն, և որ միայն մարդը կարող է ստեղծել սեփականություն⁶: Պրոֆեսոր Թիմ Դորնիսը նշում է, որ այս տեսության ձևավորման դարաշրջանում նկատի են ունեցել ֆիզիկական անձին, սակայն *իրավունք աշխատանքի դիմաց* հայեցակարգը կարող է կիրառելի լինել նաև ԱԻ նկատմամբ, քանի որ մարդն է այն ստեղծել, նա էլ ստա-

complex.com/music/2016/09/artificial-intelligence-new-song-daddys-car: Նման արդյունքների այլ օրինակներ տե՛ս **Guadamuz, Andres**, *Do Androids Dream of Electric Copyright? Comparative Analysis of Originality in Artificial Intelligence Generated Works* (June 5, 2017). *Intellectual Property Quarterly*, 2017 (2), էջ 2-4, <https://ssrn.com/abstract=2981304>; **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Survey* (April 1, 2020). *JSPG*, Vol. 16, էջ 2-5; *Creative AI: Computer composers are changing how music is made*, 2015, <https://newatlas.com/creative-artificial-intelligence-computer-algorithmic-music/35764/>; *Creative AI: The robots that would be painters*, 2015, <https://newatlas.com/creative-ai-algorithmic-art-painting-fool-aaron/36106/>

⁵ Տե՛ս **Tim W. Dornis**, *Artificial Creativity: Emergent Works and the Void in Current Copyright Doctrine*, 22 *Yale J.L. & Tech.* 1 (2020), էջ 9, հղում 21:

⁶ Տե՛ս, օրինակ, **Takashi B. Yamamoto**, *AI Created Works and Copyright*. *Patents & Licensing*, Vol. 48, № 1 (2018) 8, էջ 4-6:

ցել է արդյունքը, ուրեմն նաև ինքն է այդ արդյունքի տերը⁷: *Անհատականության տեսությունը (Personality Theory)* կամ անձնական իրավունքների տեսությունը (Կանտ, Հեգել, այլք) հիմնված է անհատականության և բարոյական իրավունքների պաշտպանության վրա (հիմնականում հեղինակային իրավունքում), ընդունում է, որ որևէ բանի ծնունդ տված մարդը, դրանում դնելով իր *արտահայտությունը*, պետք է այն ունենա որպես սեփականություն: Անհատականություն-իրավունք տեսության դեպքում անհատ-աշխատանք կապի անբաժանելիությունը ժխտում է ԱԻ արդյունքների պաշտպանություն տրամադրելը, քանի որ ԱԻ-ն չունի անհատականություն և կամք⁸: Այս հանգամանքը, սակայն, չի խանգարում դիտարկել ԱԻ արդյունքներն այլ՝ հարակից իրավունքների ինստիտուտով պաշտպանելու հնարավորությունը, քանի որ այդ դեպքում *մարդ-հեղինակի* առկայության պահանջը բացակայում է⁹:

ԱԻ ձեռք բերած արդյունքների պաշտպանության հնարավորությունն առավելապես հիմնավորվում է *խրախուսման տեսության (Incentive Theory)* շրջանակում, որը հիմնվում է հեղինակային իրավունքի՝ անգլոամերիկյան համակարգի առաջնային նպատակի վրա, այն է՝ գիտության և արվեստի առաջընթացի խրախուսումը: Թեև համակարգիչներն ու ռոբոտները չեն կարող խրախուսվել գումար ստանալով կամ հեղինակություն, համբավ ձեռք բերելով, կարծիք կա, որ առանց շոշափելի խրախուսման միջոցների ԱԻ ծրագրավորողները և ԱԻ տեղծումը ֆինանսավորող կազմակերպությունները շահագրգիռ չեն լինի բարելավելու ԱԻ գործառույթները կամ ստեղծելու ԱԻ նոր համակարգեր¹⁰: Կա նաև հակառակ տեսակետը, որ ԱԻ ստեղծողները (ներդրողները) արդեն իսկ բավարար չափով խրախուսված են նորարարություն անելու, քանի որ իրավունք են ձեռք բերում ԱԻ համակարգչային ծրագրի և սարքավորումների (software/hardware) նկատմամբ, և լրացուցիչ իրավունքներ տալը կարող է հանգեցնել նրանց կրկնակի խրախուսման և գերազնահատման¹¹: Կարծիք կա նաև, որ ներդրումների խրախուսման անհրաժեշտության և ներդրողների արձագանքի մասին հարցերը դեռևս բավարար ուսումնասիրված չեն: Կարծում ենք, որ *տեխնոլոգիաներում ներդրումները խրախուսելու* փաստարկը հիմնավոր է, սակայն լրացուցիչ ուսումնասիրության և իրավիճակի փաստացի գնահատման անհրաժեշտություն կա: Հարկա-

⁷ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 31:

⁸ Տե՛ս **Takashi B. Yamamoto**, նշվ. աշխ.:

⁹ Տե՛ս **Cock Buning, M.** (2016). *Autonomous Intelligent Systems as Creative Agents under the EU framework for Intellectual Property*. European Journal of Risk Regulation, 7(2), էջ 321:

¹⁰ Տե՛ս, օրինակ, **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma* (September 1, 2016). IDEA: The IP Law Review, Vol. 57, № 3, 2017, էջ 438-439:

¹¹ Տե՛ս **Robert Yu** *The Machine Author: What Level of Copyright Protection Is Appropriate for Fully Independent Computer-Generated Works?*, 165 U. Pa. L. Rev. 1245 (2017), էջ 1261, 1263, https://scholarship.law.upenn.edu/penn_law_review/vol165/iss5/5

վոր է պարզել ԱԻ ստեղծման գործում կատարվող ծախսերը, ներդրումների բնույթն ու ծավալները, ինչը կարող է արդարացնել ներդրողների համապատասխան իրավունքների ճանաչումը: Համեմատության համար նշենք, որ «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» Հռոմի կոնվենցիայով հնչյունագրեր արտադրողներին (նմանապես հեռարձակող կազմակերպություններին¹²) իրավունքներ տրամադրելը հիմնավորվում էր հենց ներդրումներով, որոնք կատարվում էին այն ժամանակ հնչյունագիր արտադրելու գործընթացում, այդ թվում՝ ստուդիաների տեխնիկական սպասարկման և ապահովման, հնչյունագրի արտադրության և տարածման համար: Ուստի այն ժամանակ *տեխնոլոգիական ներդրումներ* փաստարկը հիմնավոր էր դարձնում իրավական պաշտպանություն տրամադրելը նշված սուբյեկտներին՝ ներդրումները վերադարձնելու, ինչպես նաև պաշտպանվելու այն ժամանակ այդ ոլորտում լայնորեն տարածված հենությունից¹³:

Մտավոր սեփականության *տնտեսական ասպեկտի* տեսանկյունից ԱԻ արդյունքներին պաշտպանություն տրամադրելը հիմնավորվում է շուկայում որոշ տեսակի և քանակի ապրանքների պահանջարկ-առաջարկը հավասարակշռելու նպատակով, ինչը կարող է խախտվել հանգեցնելով «շուկայի ձախողման», եթե չկա արդյունավետ պաշտպանություն¹⁴:

Այս փաստարկը ևս ուժեղ է թվում, սակայն դարձյալ բացակայում են ապացույցների վրա հիմնված ուսումնասիրությունները, թե գլոբալ տնտեսության և մշակույթի զարգացման վրա ինչ ազդեցություն է գործում այդ արդյունքների հանրային տիրույթում գտնվելը, և ինչ հետևանքներ կարող են առաջանալ դրանց պաշտպանություն տրամադրե-

¹² Կատարողների դեպքում այլ է. նրանք պետք է հեղինակային իրավունքի պաշտպանություն ստանային, իսկ հեղինակային իրավունքի շրջանակից բացառումը պատմական պատճառներ ունի և պայմանավորված է ձայնագրման տեխնոլոգիայի զարգացմամբ, երբ կատարումները կարող էին ձայնագրվել, դրանց ձայնագրություններն էլ օգտագործվել առևտրային նպատակներով: Հարակից իրավունքների մասին մանրամասն տե՛ս **S. M. Stewart**, *International Copyright and Neighboring Rights*, էջ 185 (Butterworths, 1989); **Richard Arnold Q.C.**, *Performers' Right 6* (**Sweet & Maxwell**, London, 2004); **Michael Blackener** (ed.), *Border Control of Intellectual Property Rights* (**Sweet & Maxwell**, London, 2004); **H. Cohen Jehoram**, “The Nature of Neighboring Rights of Performing Artists, Phonogram Producers and Broadcasting Organizations” 144 RIDA (April 1990):

¹³ Ավանդական կատեգորիայի հարակից իրավունքների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ *տեխնոլոգիական ներդրումներ* հիմնավորումն այլևս հնացած է, իսկ այդ իրավունքները, որոնք ձեռք բերելու համար որևէ նվազագույն չափանիշ չի նախատեսվում, այլ միայն առաջին ամրագրման փաստի ուժով են ճանաչվում, հավասարակշռված չեն և պետք է վերացվեն: Տե՛ս **Hughenoltz, P.B.** *Neighboring Rights are Obsolete. IIC 50*, 1006–1011 (2019), <https://doi.org/10.1007/s40319-019-00864-3>

¹⁴ Տե՛ս **u. օրինակ, Takashi B. Yamamoto**, նշվ. աշխ., էջ 6-8; **Begoña González Otero and João Pedro Quintais**, *Before the Singularity: Copyright and the Challenges of Artificial Intelligence*, September 25, 2018, <http://copyrightblog.kluweriplaw.com/2018/09/25/singularity-copyright-challenges-artificial-intelligence/>

լու դեպքում¹⁵: Կարծում ենք, որ մտավոր սեփականության՝ նորարարության ու ստեղծագործականության խթանման նպատակը պետք է հավասարակշռվի դրա մեկ այլ՝ հեղինակի (ստեղծագործողի) իրավունքների պաշտպանության և պատշաճ օգուտներ ապահովելու նպատակով, և արդյունավետ համարվող այս կամ այն լուծումը պետք է նաև հիմնված լինի համապատասխան շուկաների գնահատման, օգուտների ու վնասների տնտեսական հաշվարկների վրա:

Հօգուտ ԱԻ ձեռք բերած արդյունքների պաշտպանության՝ որոշ հեղինակներ ուշադրություն են հրավիրում այն հանգամանքին, որ ԱԻ ծրագրավորողը կամ օգտագործողը, մտավախություն ունենալով, որ ԱԻ ստացած արդյունքը կընկնի հանրային տիրույթ, կարող են թաքցնել արդյունքն ԱԻ կողմից ստացված լինելու փաստը¹⁶, իսկ հակառակը դժվար կլինի ապացուցել, քանի որ համապատասխան տեղեկատվությունը սովորաբար գաղտնի է: Մա էլ իր հերթին կհանգեցնի հանրային տեղեկատվության սահմանափակման և, ի վերջո, ԱԻ ոլորտի նորարարության գործընթացների դանդաղեցման¹⁷:

Վերջապես, մի խումբ հեղինակներ էլ մտահոգություն են հայտնում առ այն, որ պաշտպանություն տրամադրելը կհանգեցնի թվային շուկաներում մրցակցության անհավասարակշռության, քանի որ ԱԻ արտադրությունը հիմնականում կենտրոնացած է ԱՄՆ-ում և Ճապոնիայում տեղակայված մի քանի խոշոր խաղացողների ձեռքում¹⁸, ինչն էլ կարող է հանգեցնել *վերաֆեռդալացման* ամբողջ աշխարհում¹⁹:

Այսպիսով, գտնում ենք, որ ԱԻ արդյունքների իրավական պաշտպանություն տրամադրելու կապակցությամբ մինչ որևէ իրավակարգավորում նախատեսելը կարևոր է իրականացնել ապացույցների վրա հիմնված ուսումնասիրություններ ինչպես ԱԻ տեխնոլոգիաներում ներդրումների ծավալների, բնույթի և ներդրողների դիրքորոշումների վերաբերյալ, այնպես էլ առ այն, թե իրավական պաշտպանություն տրամադրելու տեսքով խրախուսումը որքանով կխթանի ԱԻ արտադրությունը, ինչ ազդեցություն կկրեն տնտեսական և մշակութային շու-

¹⁵ ԱՄՆ-ում, օրինակ, ոչ պետական մակարդակում իրականացվել են որոշ հարցումներ ԱԻ գիտնականների, տեխնոլոգիաների քաղաքականության ոլորտի փորձագետների և մտավոր սեփականության իրավունքի ոլորտի գիտնականների շրջանում համապատասխան հարցաշարերի միջոցով անդրադառնալով հարցերի այն մասին, թե ԱԻ ձեռք բերած արդյունքներին պաշտպանություն տրամադրելը կարո՞ղ է խթանել արդյոք ԱԻ արտադրությունը և այլն: Տե՛ս **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Survey*, նշվ. աշխ., էջ 9-15:

¹⁶ Տե՛ս **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma*, նշվ. աշխ., էջ 450:

¹⁷ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 40, հղում 138:

¹⁸ Տե՛ս WIPO, *Artificial Intelligence*, WIPO Tech. Trends 2019, էջ 58:

¹⁹ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 41, հղում 144: Ալգորիթմական տնտեսության երկարաժամկետ հաղթողները աշխարհի ընկերությունների ընդամենը մի փոքր մասն են, տե՛ս **Richard B. Freeman**, *Who Owns the Robots Rules the World*, 5 Iza World of Labor (2015), էջ 1, 5-6; **Peter Stone et al.**, *Artificial Intelligence and Life in 2030: One Hundred Year Study on Artificial Intelligence*, Stan. U. (2016), էջ 43-49:

կաները, ինչ կշահի հանրությունը: Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման մեթոդաբանությունը, վնասների և օգուտների տնտեսական հաշվարկը կարող են ուղենիշ լինել նման ուսումնասիրությունների համար: Այս հանգամանքը, սակայն, չի խանգարում վերլուծելու ԱԻ արդյունքներին պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ միջազգային մակարդակում քննարկվող հետևյալ երեք հիմնական տարբերակները. պաշտպանություն՝ ա) հեղինակային իրավունքի ինստիտուտով, բ) հարակից իրավունքի ինստիտուտով, գ) գործող օրենսդրությամբ նախատեսված հայեցակարգերով, այլ կերպ՝ *lex lata* կամ ստատուս քվոյի պահպանում²⁰:

Արհեստական ինտելեկտի ստացած արդյունքների պաշտպանության հնարավորությունը հեղինակային իրավունքի ինստիտուտով մանրամասն քննարկվել է մեր նախորդ հոդվածներից մեկում²¹, որում եզրահանգել ենք, որ նման արդյունքները կարող են պաշտպանվել հեղինակային իրավունքով միայն այն դեպքում, եթե դրանցում առկա լինի բավարար *մարդկային ստեղծագործական միջամտություն*: Թե՛ մայրցամաքային, թե՛ ընդհանուր իրավունքի համակարգերում հեղինակային իրավունքն ունի մարդակենտրոն, մարդածին հիմք²²: Թեև *յուրօրինակություն* և *հեղինակություն* հայեցակարգերը սկզբունքորեն տարբեր կիրառումներ ու մեկնաբանություններ են ստացել նշված երկու համակարգերի երկրներում (*հեղինակի անհատականության արտահայտությունը աշխատանքում* և *նվազագույն ստեղծագործականություն*), սակայն երկուսում էլ ընդունվում է, որ առանց աշխատանքում *մարդ-հեղինակի նվազագույն ստեղծագործական ներդրման* հեղինակային իրավունք չի կարող ծագել և պաշտպանություն չի կարող տրամադրվել: Ուստի, քանի դեռ *ստեղծագործություն* և *հեղինակ* հասկացությունների առնչությամբ համապատասխան օրենսդրություններում չեն կատարվել փոփոխություններ կամ նախադեպային իրավունքում վերաիմաստավորումներ առ այն, որ ստեղծագործությունը կարող է ստեղծվել նաև *ոչ մարդու* կողմից (ինչը, սակայն, կհակասի հեղինակային իրավունքի էությանը և հիմունքներին), ԱԻ ձեռք բերած արդյունքները չեն կարող վայելել հեղինակային իրավունքի պաշտպանությունը²³:

Արհեստական ինտելեկտի ստացած արդյունքների պաշտպանության հնարավորությունը հարակից իրավունքի ինստիտուտով մասնագիտական գրականության մեջ հիմնավորվում է մի քանի հանգաման-

²⁰ Տե՛ս, օրինակ, AIPPI 2019 – Study Question – *Copyright/Data Copyright in artificially generated works. Summary Report* by Jonathan P. OSHA, Anne Marie VERSCHUUR and Ari LAAKKONEN, Guillaume HENRY, Ralph NACK and Lena SHEN, July 1, 2019, էջ 5,15; Tim W. Dornis, նշվ. աշխ., էջ 6, 25-29:

²¹ Տե՛ս **Տ. Դավթյան**, նշվ. աշխ.:

²² Տե՛ս, օրինակ, Mark Rose, *Authors and Owners*, էջ 1, 49, *passim* (1993); Annemarie Bridy, *Coding Creativity: Copyright and the Artificially Intelligent Author*, 2012 Stan. Tech. L. Rev. էջ 1, 3:

²³ Տե՛ս **Տ. Դավթյան**, նշվ. աշխ., էջ 46-52:

քով: Առաջին՝ ԱԻ ձեռք բերած արդյունքներին գոնե առավել նվազ²⁴ իրավական պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտությամբ²⁵: Երկրորդ՝ այս ինստիտուտն ուղղակիորեն չի պահանջում արդյունքի առաջացմանը *մարդ-հեղինակի* նվազագույն ստեղծագործական ներդրում, ուստի և մարդ-հեղինակի առկայություն՝ որպես պաշտպանունակության պայման: Սա թույլ կտա պաշտպանել ԱԻ նորարարության մեջ ներդրումները և միաժամանակ չխաթարել հեղինակային իրավունքի հիմունքները: Երրորդ՝ հարակից իրավունքները, ի տարբերություն անձի անհատականության վրա հիմնված հեղինակային իրավունքների, ավելի հեշտ և ազատ փոխանցելի են գոնե մասամբ²⁶: Սա կարևոր է տնտեսական առումով, քանի որ ԱԻ ստեղծման ծրագրեր իրականացնողները հնարավորություն կստանան ներգրավելու ֆինանսական նոր միջոցներ՝ իրենց նորարարական գործունեության ընդլայնման ու զարգացման համար:

Հատկանշական է նաև, որ մասնագիտական գրականության մեջ ուշադրություն է հրավիրվում այն բանին, որ հարակից իրավունքները պաշտպանում են որոշակի անձանց և կազմակերպությունների որոշակի շահեր, որոնք նպաստում են ստեղծագործությունները հանրությանը հասանելի դարձնելուն, և որ նման սուբյեկտներին տրվում են հարակից իրավունքներ, քանի որ դրանց դերը հանրությանը հասանելի դարձնելու գործում ընդունվում է որպես բավարար *ստեղծագործական*: Ուստի, ԱԻ ձեռք բերած արդյունքների նկատմամբ այս ինստիտուտի կիրառումը կարող է տեղին չլինել²⁷: Կարծում ենք, որ *հանրությանը հասանելի դարձնելու բաղադրիչը* ԱԻ ձեռք բերած արդյունքների դեպքում պետք է դիտարկել խրախուսման տեսանկյունից, նախ, որ ստեղծվեն հնարավորինս շատ զարգացած ԱԻ համակարգեր, որոնք կարող են ստանալ մարդկության համար օգտակար արդյունքներ, և որ

²⁴ Մասնագիտական գրականության մեջ հարակից իրավունքների՝ հեղինակային իրավունքից կախյալ և դրան ստորակարգ լինելու մասին կարծիքները տարբեր են: Ընդունվում է նաև, որ հարակից իրավունքներն անախ են և հիերարխիկ չեն հեղինակային իրավունքներին (տե՛ս **Sam Ricketson and Jane C. Ginsburg**, *International Copyright and Neighbouring Rights*, Oxford: Oxford Univ. Press 2006, vol. 2, էջ 1222), որ դրանք նման են հեղինակային իրավունքներին, բացառիկ են կամ մոտ են լիարժեք բացառիկ համարվելուն (հատկապես նոր կատեգորիայի հարակից իրավունքների ամրագրմամբ), որ հնացած է Հռոմի կոնվենցիան, որով երկրներին թույլատրվում էր սահմանել միայն վարձատրություն ստանալու իրավունք և ոչ թե՛ բացառիկ իրավունքներ (տե՛ս **Gervais, Daniel J.**, *Related Rights in United States Law* (October 16, 2018); **Ami Tijdschrift Voor Auteurs-**, Media & Informatierecht (2018); Vanderbilt Law Research Paper № 18-59, էջ 2, <https://ssrn.com/abstract=3267501>): Նշենք, որ ԱՄՆ իրավական համակարգը չի ճանաչում հարակից իրավունքների ինստիտուտը, իսկ այդ կատեգորիայի օբյեկտները պաշտպանվում են հեղինակային իրավունքի ինստիտուտով համապատասխան առանձնահատկություններով:

²⁵ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 36, հղում 125:

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 45, հղում 162, նաև՝ **Jane C. Ginsburg & Edouard Treppoz**, *International Copyright Law: U.S. and E.U. Perspectives*, (2015), էջ 545-49:

²⁷ Տե՛ս AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ. էջ 14, չինական գիտական խմբի դիրքորոշումը:

այդ արդյունքները հանրությանը հասանելի լինեն: Բացի այդ, *հարակից իրավունքներն* այս համատեքստում պետք է դիտարկել որպես հավաքական հասկացություն՝ ԱԻ արդյունքներին հեղինակային իրավունքից դուրս այլ պաշտպանություն տրամադրելու առումով:

Հարակից իրավունքների պաշտպանության համատեքստում լայնորեն քնարկվող հարցերը՝ *պաշտպանունակության ի՞նչ չափանիշ պետք է սահմանվի, ո՞վ պետք է համարվի սկզբնական իրավատերը, ի՞նչ իրավունքներ պետք է տրամադրվեն, արդյոք գործող հարակից իրավունքների՞ շրջանակում, թե՞ առանձին իրավունքներ պետք է լինեն, արդյոք դրանք փոխանցելի՞ պետք է լինեն, որքա՞ն պետք է լինի պաշտպանության ժամկետը*²⁸:

Պաշտպանունակության պայմանը կամ պահանջվող չափանիշը:

Առաջարկվում է պաշտպանություն տրամադրել միայն այն արդյունքներին, որոնք գիտության, գրականության, արվեստի բնագավառի են և յուրօրինակ են, սակայն հեղինակային իրավունքի պաշտպանության ենթակա չեն միայն այն պատճառով, որ չեն բավարարում *մարդ-հեղինակի* առկայության պայմանը: Այսինքն՝ առաջարկվում է մշակել յուրօրինակության նոր՝ օբյեկտիվ չափանիշ՝ ըստ էության Այան Թյուրինգի առաջարկած օբյեկտիվ չափանիշի օրինակով²⁹: Սրան համամիտ են նաև այլ հեղինակներ՝ ավելացնելով, որ այդ օբյեկտիվ չափանիշի առավել մանրամասն կիրառումներն արդեն կմշակվեն դատական նախադեպերով³⁰: Այսինքն՝ ընդհանուր մոտեցումն այն է, որ պաշտպանություն տրամադրելու համար հարկավոր է սահմանել յուրօրինակության որոշակի չափանիշ՝ *նվազագույն ստեղծագործականություն* (տվյալ դեպքում՝ ավարտուն արդյունքի ակնհայտ ստեղծագործական բնույթ), որը նաև կբացառի առավել լայն շրջանակի արդյունքներին չհիմնավորված պաշտպանություն տրամադրելը: Բնարկե, զուտ մեխանիկական բնույթի ներդրումների հարցը խնդիր չի առաջացնի, քանի որ այդ դեպքում կարձանագրվի, որ ԱԻ-ն օժանդակող գործիք է եղել, իսկ արդյունքի հեղինակը կհամարվի մարդը: Սակայն պաշտպանություն չի տրամադրվի նաև այն դեպքերում, երբ ԱԻ-ն թեն ինքնուրույն է եղել, սակայն պատճենել է արվեստի գործը մեկ այլ գործից, այնպես, ինչպես մարդուն կմերժվեր պաշտպանությունը, քանի որ չէր հաստատվի ինքնուրույն ստեղծագործականության չափանիշին բա-

²⁸ Նաև քննարկվում է, թե արդյոք պետք է նշել, որ արդյունքն ԱԻ-ն է ստացել և արգելել ապակողմնորոշիչ նշումները, թե դրանք մարդու կողմից են ստեղծվել, ինչպես նաև տուգանքներ նախատեսել կեղծ նշումների համար, կանոններ սահմանել համապատասխան ԱԻ մշակած անձի անունը նշելու վերաբերյալ և այլն, տե՛ս AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ., էջ 16:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 15. ՄԹ, Սինգապուրի և Ֆինլանդիայի գիտական խմբերի դիրքորոշումները, իսկ Թյուրինգի մշակած չափանիշների մասին տե՛ս **Turing A. Computing Machinery and Intelligence**, 59 Mind (1950), էջ 433, 434:

³⁰ Տե՛ս AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ., էջ 15:

վարարելը: Կարծիք կա նաև, որ օբյեկտիվ չափանիշը գնահատելիս ԱԻ դերը պետք է կենտրոնական լինի, որպեսզի ակնհայտ լինի, որ մարդն առանց ԱԻ չէր կարող նման արդյունք ստանալ. սրանով կբացատրվի գուտ մաթեմատիկական տարբերին պաշտպանություն տրամադրելը³¹:

Յուրօրինակության օբյեկտիվ չափանիշի հետ մեկտեղ՝ առաջարկվում է նաև հիմք ընդունել ԱԻ ստեղծման գործում կատարված ներդրումները, որոնք պետք է էական լինեն: Կարծում ենք՝ տեղին է նաև այս չափանիշի սահմանումը՝ նման արդյունքների պաշտպանության շրջանակը հստակեցնելու, այն անհիմն չընդլայնելու և բացառապես ԱԻ ստեղծման ոլորտում ներդրումները խթանելու համար³²: Այսպիսով, ԱԻ ձեռք բերած արդյունքները հարակից իրավունքներով պաշտպանելու համար հիմնականում նշվում են ավարտուն աշխատանքի *յուրօրինակությունը* (օբյեկտիվ չափանիշ) և *էական ներդրումները*՝ որպես պաշտպանունակության պայմաններ:

Տրամադրվող իրավունքները: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ հարակից իրավունքների գործող ռեժիմը (որը նախատեսված է մարդու կողմից ստեղծված ստեղծագործությունների համար) ունակ չէ ապահովելու ԱԻ ձեռք բերած արդյունքների պաշտպանությունը, և նպատակահարմար է հարակից իրավունքների լրացուցիչ կատեգորիա սահմանել, որը կմշակվի ստեղծված իրավիճակին համապատասխան և կներառի ԱԻ ձեռք բերած բոլոր արդյունքների դրսևորումները³³: Ավելին, հարակից իրավունքների ավանդական կատեգորիաների կապակցությամբ կարծիք կա, որ դրանք հավասարակշռված չեն, չեն նախատեսում պաշտպանունակության հստակ չափանիշներ, ուստի կիրառման շրջանակն է անորոշ, իսկ դրանց գոյությունը նախկինում արդարացնող *տեխնոլոգիական ներդրումներ* հիմնավորումը նոր թվային դարաշրջանում այլևս հնացած է³⁴:

Այսպիսով, մասնագիտական շրջանակում առաջարկվում է ԱԻ արդյունքների պաշտպանության համար նախատեսել նոր հարակից իրավունքներ³⁵: Օրինակ, անգլիական գիտական խումբն առաջարկում

³¹ Տե՛ս նույն տեղը՝ Ֆինլանդիայի գիտական խմբի դիրքորոշումը:

³² Նշվում է նաև գերկարգավորման վտագի, ինչպես նաև ֆիզիկական անձ հեղինակների ստեղծագործական ազատության հնարավոր սահմանափակման մասին այն դեպքում, երբ մարդը կարող է մեքենայի ստացած արդյունքի նկատմամբ իրավունքի հնարավոր խախտող լինել:

³³ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 45:

³⁴ Տե՛ս սույն հոդվածի հղում 13-ը: Փոխարենը դրականորեն է լուսաբանվում տվյալների բազայի նկատմամբ հարակից իրավունքների կատեգորիան, որը նախատեսում է էական ներդրման հստակ չափանիշը:

³⁵ Տե՛ս AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ., էջ 13-14. գերմանական և շվեդական գիտական խմբերի դիրքորոշումները: Կա նաև հակառակ կարծիքը, որ դեռևս վաղ է նոր հարակից իրավունքներ սահմանելու համար, և պետք է գործող հարակից իրավունքների կատեգորիաների շրջանակում պաշտպանություն տրամադրել (տե՛ս նույն տեղը, էջ 7-8). ֆրանսիական գիտական խմբի դիրքորոշումը:

է ստեղծել նոր հարակից իրավունքները (*sui generis*³⁶)՝ փոխարինելով համակարգչի գեներացված աշխատանքներին «Հեղինակային իրավունքի, դիզայնի և արտոնագրերի մասին» 1988 թ. ակտի (1988 թ. կտ) 9(3) բաժնով հեղինակային իրավունքի շրջանակում տրված պաշտպանությունը: Նշվում է, որ դա հեղինակային իրավունքի պաշտպանությունից հանելով՝ կխուսափենք յուրօրինակության՝ ավանդական նախադեպային մեկնաբանությունները խստացնելու անհրաժեշտությունից, կապահովվենք ամուր հիմքեր՝ ԱԻ ձեռք բերած արդյունքները պաշտպանելու, ինչպես նաև միջազգային մակարդակում կարգավորումների ներդաշնակեցման համար³⁷:

Գերակշռող կարծիքն այն է, որ նոր իրավունքները պետք է լինեն գույքային (տնտեսական) իրավունքներ, վերարտադրման և արդյունքը հանրությանը հասանելի դարձնելու իրավունքներ: ԱԻ համակարգի ստեղծման մեջ ներդրողը պետք է լինի նոր հարակից իրավունքների սկզբնական իրավատերը: Բարոյական իրավունքները չպետք է ճանաչվեն³⁸:

Կարծում ենք, որ ԱԻ արդյունքների պաշտպանությունը հարակից իրավունքների շրջանակում նախատեսելիս հարկավոր է սահմանել նոր հարակից իրավունքներ՝ պաշտպանունակության հստակ չափանիշներով և կարգավորման շրջանակով ու կանոններով:

ԱԻ ձեռք բերած արդյունքների սկզբնական իրավատերը: Հարակից իրավունքների շրջանակում պաշտպանություն տրամադրելու դեպքում որպես սկզբնական իրավատեր առավելապես նշվում է ԱԻ համակարգի ստեղծման գործում ներդրումներ կատարող ֆիզիկական կամ իրավաբանական անձը³⁹: Ընդ որում՝ համադրելի է համարվում տվյալների բազայի պաշտպանության կառուցակարգը, որը հարակից իրավունքներ է վերապահում անձին, ով իր նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ որակապես և (կամ) քանակապես էական ներդրում է կատարել տվյալների բազայի պարունակությունը ձեռք բերելու, ճշգրտելու կամ ներկայացնելու համար⁴⁰: Այս մոտեցումը քննադատվում է այն հիմքով, որ թեև դա կարող է խրախուսել ԱԻ արտադրության մեջ ներդրում-

³⁶ «*Sui generis*» լատիներեն եզրույթ է, որը նշանակում է «հատուկ տեսակ»: Մտավոր սեփականության իրավունքի շրջանակում այն վերաբերում է պաշտպանական ռեժիմի հատուկ ձևին՝ հայտնի շրջանակից դուրս: Այն դիտվում է որպես որոշակի կարիքների համար հարմարեցված հատուկ ռեժիմ (տե՛ս, օրինակ, **Moni Wekesa**, *What is Sui Generis System of Intellectual Property Protection*, 2006 African Technology Policy Studies Network):

³⁷ Տե՛ս AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ., էջ 5:

³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 18:

³⁹ Տե՛ս նույն տեղը:

⁴⁰ Տե՛ս, օրինակ, **Cock Buning, M.**, նշվ. աշխ., էջ 320-321; **Stephen Hewitt**, *Protection of Works Created by the Use of Computers*, 133 New L.J. (1983), էջ 237; քննադատական դիրքորոշումը տե՛ս **Colin R. Davies**, *An Evolutionary Step in Intellectual Property Rights—Artificial Intelligence and Intellectual Property*, 27 Comp. L. & Sec. Rev. (2011), էջ 616:

ները, սակայն գործնականում ԱԻ արդյունքների նկատմամբ իրավունքների փոխանցելիության դժվարություններ կառաջացնի⁴¹:

Մասնագիտական գրականության մեջ ԱԻ արդյունքների սկզբնական իրավատիրոջ վերաբերյալ կան հետևյալ մոտեցումները. քիչ հանդիպող, բայց կան կարծիքներ, որ իրավունքները պետք է տրվեն «ոչ մարդուն», հետևաբար՝ հարկ է վերանայել օրենսդրությամբ «հեղինակ» հասկացությունը, որ, մարդ-հեղինակից բացի, այն ներառի նաև «ոչ մարդ-հեղինակին»՝ այդպիսով՝ նոր ճանապարհ բացելով ԱԻ նորարարության զարգացման համար⁴²: Սա անուղղակիորեն ենթադրում է ԱԻ-ն ճանաչել իրավունքի սուբյեկտ, առանց որի այն չի կարող ունենալ իրավունքներ ու պարտականություններ և հանդես գալ դատարանում⁴³: ԱԻ իրավասուբյեկտության, այն որպես իրավունքներով և պարտականություններով իրավաբանական անձ ճանաչելու (e-person) տեսակետները ևս քննարկվում է մասնագիտական շրջանակներում⁴⁴:

Մարդ-իրավատերերի կապակցությամբ հիմնականում նշվում են երեք խումբ դերակատարներ, որոնք կարող են հավակնել ԱԻ ձեռք բերած արդյունքի նկատմամբ իրավունքներին: Դրանք են՝ ԱԻ **ծրագրավորողը**, ԱԻ **սեփականատերը/ներդրողը** և ԱԻ վերջնական **օգտագործողը**: Ի դեպ, նշված երեք կատեգորիաների սուբյեկտների դեպքերում էլ ընդունվում է, որ իրավունքները տրամադրվելու են իրավաբանական ֆիկցիայի միջոցով, երբ նրանք չունեն ստեղծագործական ներդրում արդյունքի ստացման գործում, սակայն իրավունք են ստանալու: Այս սուբյեկտները դիտարկվում են նաև հեղինակային իրավունքի շրջանակում հնարավոր պաշտպանություն տրամադրելու տեսանկյունից, և ընդունվում է, որ այդ միջոցով լուծվում է «մարդ-հեղինակի» առկայության պահանջի հարցը⁴⁵: Կախված այս սուբյեկտների՝ ԱԻ արդյունքի ստացման գործում ներդրման ծավալից ու բնույթից, և թե դրանցից որին իրավունք տալու դեպքում նաև հանրությունն առավելագույնս կշահի, առաջարկվում է այդ սուբյեկտներից մեկին ճանաչել որպես *իրավական հեղինակ*⁴⁶:

ԱԻ արդյունքի ձեռքբերման գործընթացում ավելի լայն շրջանակի դերակատարների մասին նշելով⁴⁷՝ որոշ հեղինակներ էլ առաջարկում

⁴¹ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 54:

⁴² Տե՛ս **Ryan Abbott**, *I Think, Therefore I Invent: Creative Computers and the Future of Patent Law*, 57 B. C. L. Rev. (2016), էջ 1079; **Colin R. Davis**, նշվ. աշխ., էջ 601:

⁴³ Տե՛ս **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma*, նշվ. աշխ., 441:

⁴⁴ Տե՛ս **Samir Chopra & Laurence F. White**, *A Legal Theory For Autonomous Artificial Agents* 1, (2011) էջ 151; **Jack B. Balkin**, *The Path of Robotics Law*, 6 Calif. L. Rev. (2015) էջ 45-46; **Jared Vasconcellos Grubow**, *O.K. Computer: The Devolution of Human Creativity and Granting Musical Copyrights to Artificially Intelligent Joint Authors*, 40 Cardozo L. Rev. (2018) էջ 387, 419:

⁴⁵ Տե՛ս, օրինակ, **Annemarie Bridy**, նշվ. աշխ., էջ 66-67; **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma*, նշվ. աշխ., էջ 440-445; **Robert Yu**, նշվ. աշխ., էջ 1265-1269:

⁴⁶ Տե՛ս **Hristov Kalin**, *Artificial Intelligence and the Copyright Dilemma*, նշվ. աշխ., 443:

⁴⁷ Դրանք մարդիկ կամ կազմակերպություններ են, որոնք՝ (1) ներդրում են միջոց-

են իրավունքներ տրամադրել այն դերակատարին, որն առավելապես է ասոցացվում արդյունքի ձեռք բերման հետ (մոտարկման մոտեցում), կամ նրան, ով անհրաժեշտ նախապատրաստություններ է կատարել ԱԻ արդյունքի ստացման գործում (ներդրման մոտեցում)⁴⁸:

ԱԻ ծրագրավորող կամ սեփականատեր/ներդրող: Այս համատեքստում ամենից հաճախ նշվում է, որ իրավունք պետք է ստանա ծրագրավորողը: Ընդ որում՝ նշանակություն չի տրվում, թե իրավունքներն անմիջականորեն ծագում են ծրագրավորողի, թե *work-made-for-hire* հայեցակարգի (անգլոամերիկյան համակարգում) միջոցով նրա գործատուի (ներդրողի) համար: Մայրցամաքային իրավունքի երկրներում ամենայն հավանականությամբ ծրագրավորող-աշխատողի մոտ կծագեն իրավունքներ և *ծառայողական ստեղծագործություն* կառուցակարգի միջոցով կանցնեն գործատուին:

Անվիճելի է, որ ԱԻ ծրագրավորողն ԱԻ համակարգչային ծրագրի փաստացի հեղինակն է⁴⁹: Սակայն սույն հոդվածում քննարկվող ԱԻ ձեռք բերած արդյունքների դեպքում ծրագրավորողի սկզբնական ներդրումը չի հասնում ստեղծագործական մակարդակի ԱԻ արդյունքի ստացման գործընթացում, ուստի նա ԱԻ ձեռք բերած արդյունքի փաստացի հեղինակը չէ: Հետևաբար, ի լրումն ԱԻ համակարգչային ծրագրի նկատմամբ ծրագրավորողի հեղինակային իրավունքի, նրան նաև հարակից իրավունք վերապահելը կրկնակի խրախուսում կամ գերազնահատում է թվում⁵⁰: Սա նաև գործնականում կարող է դժվարություններ առաջացնել ԱԻ համակարգչային ծրագրի ու սարքավորման նկատմամբ իրավունքներն այլ անձի փոխանցելիս: Մասնավորապես, ԱԻ սարքավորման գնորդը և համակարգչային ծրագրի լիցենզառուն առանց ծրագրավորողի/ներդրողի թույլտվության իրավունք չեն ունենալու օգտագործել ԱԻ ստացած արդյունքը: Իհարկե, այդ հարցը կարող է լուծվել կողմերի միջև պայմանագրով՝ բոլոր իրավունքները փոխանցելով գնորդին, սակայն, ընդհանուր առմամբ, կդժվարանա ԱԻ համակարգչային ծրագրի և սարքավորման վաճառքը: Նշվում է, որ գնորդը նաև կարող է թաքցնել ԱԻ ստացած արդյունքների իրական քանակը⁵¹:

ներ (մարդկային, ֆինանսական, տեխնիկական) ԱԻ ստեղծման գործում (AI Project Investor); (2) պատասխանատու են անհրաժեշտ նախապատրաստություններ կատարելու համար (AI Project Arranger); (3) ստեղծում են ԱԻ համակարգը (AI Coder); (4) ընտրում են ԱԻ նպատակը, որին պետք է հասնել (AI Goal Selector); (5) ընտրում են ԱԻ համակարգ ներմուծվող տվյալները (AI Data Selector); (6) մարզում են ԱԻ համակարգը (AI Trainer); (7) կատարում են որակական կամ անթեստիկ ընտրանք աշխատանքի մի շարք արդյունքներից (AI Output Selector) (տե՛ս AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ., էջ 17. ՄԹ գիտական խմբի դիրքորոշումը):

⁴⁸ Տե՛ս նույն տեղը:

⁴⁹ Տե՛ս Council Directive 2009/24, 2009 O.J. (L 111) 16, 18 (EC); 17U.S.C. § 101 (2018), հոդվ. 1:

⁵⁰ Տե՛ս **Robert Yu**, նշվ. աշխ., էջ 1261, 1263:

⁵¹ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 51, հղում 189; **Ryan Abbott**, նշվ. աշխ., էջ 1116; **Pamela Samuelson**, *Allocating Ownership Rights in Computer-Generated Works*, 47 U. Pitt. L. Rev. (1986), էջ 1208; **Andrew J. Wu**, *From Video Games to Artificial Intelligence: As-*

ԱՐ վերջնական օգտագործող: Կարծիք կա, որ իրավունքը պետք է տալ ԱՐ համակարգի օգտագործողին կամ օպերատորին⁵² դարձյալ իրավաբանական ֆիկցիայի միջոցով, քանի որ ընդունվում է, որ մարդկային ստեղծագործական միջամտությունն այստեղ ևս առկա չէ: Այս ֆիկցիան արդարացվում է այն փաստարկով, որ օգտագործողն ԱՐ փաստացի գործադրման միջոցով որոշում է ԱՐ ձեռք բերած արդյունքների վերջնական քանակը: Հետևաբար նա պետք իրավունք ստանա, որ խրախուսվի և հնարավորինս շատ ԱՐ արդյունքներ ստանա: Պրոֆեսոր Թիմ Դորնիսը, սակայն, օգտագործումը վճռական չի համարում խրախուսման տեսանկյունից, քանի որ միշտ չէ, որ օգտագործողն է որոշում, թե ԱՐ որքան արդյունք պետք է ստանա: Ըստ հեղինակի՝ դա որոշում է *ԱՐ շահագործման ուժի տերը (Power of Disposition)*⁵³՝ որպես այդպիսին համարելով ԱՐ արտադրության փաստացի և իրավական տիրոջը՝ ԱՐ համակարգչային ծրագրի լիցենզառուին և ԱՐ սարքավորման տիրոջը (hardware owner and software licensee)⁵⁴: Սա այն սուբյեկտն է, որը սովորաբար պատասխանատու է ԱՐ արդյունքի ստացման համար, իր կամքով կարող է սկսել կամ դադարեցնել այդ և կրում է ԱՐ պահպանման ծախսերը: Այս սուբյեկտը կարող է լինել ԱՐ օգտագործողը, ծրագրավորողը կամ արտադրողը⁵⁵: Այս լուծումը նաև շատ պրակտիկ է թվում իրավունքները փոխանցելու տեսանկյունից, քանի որ գնորդն արդարացված կհամարի ԱՐ որպես արտադրության միջոց ձեռք բերելը՝ ենթադրելով, որ իրեն են փոխանցվում նաև ԱՐ արդյունքների նկատմամբ իրավունքները: Արդյունքում ԱՐ սարքավորման շուկայական գինը ևս բարձր կլինի, ինչը դրական ազդակ կլինի ԱՐ ստեղծող ծրագրավորողներին փոխհատուցելու առումով⁵⁶: Այս լուծումը հեղինակը համարելի է համարում *անսոխ պատեղագործությունների* նկատմամբ հարակից իրավունքների պաշտպանության կառուցակարգին⁵⁷:

Պաշտպանության ժամկետը: Հարակից իրավունքի պաշտպա-

signing Copyright Ownership to Works Generated by Increasingly Sophisticated Computer Programs, 25 Aipla Q.J. (1997) էջ 171; **Colin R. Davies**, նշվ. աշխ., էջ 615:

⁵² Տե՛ս, օրինակ, **Robert C. Denicola**, *Ex Machina: Copyright Protection for Computer-Generated Works*, 69 Rutgers L. Rev. (2016), էջ 282-84; **Stephen Hewitt**, *Protection of Works Created by the Use of Computers*, 133 NEW L.J. (1983), էջ 236; **Pamela Samuelson**, նշվ. աշխ., էջ 1203: Քննադատության համար տե՛ս **Colin R. Davies**, նշվ. աշխ., էջ 616:

⁵³ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 49:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 48-49:

⁵⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 54-56:

⁵⁶ Նման փաստարկ են վկայակոչում այլք. տե՛ս, օրինակ, **Pamela Samuelson**, նշվ. աշխ., էջ 1203 (թեև հոգուս օգտագործողի է), **Ryan Abbott**, նշվ. աշխ., էջ 1116:

⁵⁷ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 55-56; Council Directive 2006/116, 2006 O.J. (L 372) 12, 14 (EC), հոդվ. 4, երբ անձը, ով գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտից հետո առաջին անգամ օրինական ճանապարհով հրատարակում կամ այլ միջոցներով հանրությանը մատչելի է դարձնում անսոխ պատեղագործությունը, օգտվում է հեղինակի իրավունքներից: Այս դեպքում նշանակություն է տրվում անձի ջանքերին (որը փաստացի հեղինակը չէ, ստեղծագործական ներդրում չունի) ստեղծագործությունը հանրությանը հասանելի դարձնելու և այն համապատասխան շուկան բերելու գործում:

նության ժամկետի հիմքում պետք է ընկած լինի որոշակի շահերի, ինչպես նաև պաշտպանության առավելություններն ու թերությունները հավասարակշռելու սկզբունքը: Որպես առավելություն՝ ժամկետը բավարար չափով պետք է խրախուսի ԱԻ նորարարության զարգացումը և ապահովի շուկայի դինամիկ արդյունավետությունը, որպես թերություն՝ հաշվի առնի ակնկալվող ծախսերն ու կորուստները, աշխատաշուկայի ռիսկերը, մրցակցությունը և մարդու ստեղծագործականության հնարավոր նվազումը⁵⁸:

Այս սկզբունքից ելնելով՝ առաջարկվում է նախատեսել 25 տարի (որը սահմանված է *անտիպ ստեղծագործությունների համար*)⁵⁹, 30 տարի (որը գործում է *հանրային տիրույթի քննադատական և գիտական աշխատությունների համար*)⁶⁰, 15 տարի (տվյալների բազայի համար)⁶¹: Նշվում է նաև Միացյալ Թագավորության 1988 թ. ակտով *համակարգչի գեներացրած աշխատանքի* պաշտպանության համար սահմանված 50 տարին (բաժին 12(7))⁶²: Առաջարկվում է նաև տրամադրել ավելի կարճ ժամկետ, քան գործող կատեգորիաների հարակից իրավունքների պաշտպանության համար են նախատեսված՝ խուսափելու ավանդական հեղինակներին ԱԻ էժան աշխատուժով փոխարինելու հնարավոր վտանգից⁶³:

Մենք համամիտ ենք, որ չպետք է սահմանել երկար ժամկետ ԱԻ արդյունքների նկատմամբ իրավունքների գործողության համար, քանի որ այդ արդյունքները տնտեսական առավելություն կստանան ավանդական ճանապարհով ստեղծված աշխատանքների նկատմամբ: Օրինակ, եթե ԱԻ ստացած ֆիլմը շատ ավելի քիչ ծախսեր է ենթադրում, քան ավանդական ֆիլմի արտադրությունն է (քանի որ ԱԻ ծրագրային ապահովումը ստեղծում է արհեստական կերպարներ, որոնք կենդանի դերասանների պես չեն վարձատրվում), ապա ԱԻ համար պաշտպանության նույն ժամկետը տալը վաղ թե ուշ կհանգեցնի մի վիճակի, երբ ավանդական ֆիլմերն այլևս չեն արտադրվի, քանի որ դրանք ավելի թանկ կնստեն՝ չունենալով որևէ լրացուցիչ խթան⁶⁴: Եվ վերջապես արդյունավետ լուծում կարող է լինել տարբեր ժամկետների սահմանումը տարբեր կատեգորիաների արդյունքների համար՝ ըստ նրանց տնտեսական արժեքի:

⁵⁸ Տե՛ս **Tim W. Dornis**, նշվ. աշխ., էջ 57, հղում 211; նաև՝ **Tim W. Dornis**, *Non-Conventional Copyright: An Economic Perspective*, in *Non-Conventional Copyright*, էջ 455, 467-75 (**Enrico Bonadio & Nicola Lucchi** eds., 2018):

⁵⁹ Տե՛ս Council Directive 2006/116, 2006 O.J. (L 372) 12, 14 (EC), հոդվ. 4:

⁶⁰ Տե՛ս նույն տեղը, հոդվ. 5:

⁶¹ Տե՛ս Council Directive 96/9, հոդվ. 10(1), 1996 O.J. (L 77) 20, 26 (EC): Երկար ժամկետների քննադատության համար, տե՛ս **William M. Landes & Richard A. Posner**, *An Economic Analysis of Copyright Law*, 18 J. LEG. STUD. էջ 325, 361 (1989):

⁶² Տե՛ս Copyright, Designs and Patents Act 1988, <http://www.legislation.gov.uk/ukpga/1988/48/contents>

⁶³ Տե՛ս նույն տեղը:

⁶⁴ Տե՛ս AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ., էջ 6:

Ստատուս քվոյի պահպանում: Վերջին տարբերակը, որը ևս քննարկվում է միջազգային մասնագիտական հարթակներում, խնդրո առարկա հարցի կապակցությամբ ստատուս քվոյի պահպանումն է: Առաջարկվում է որևէ օրենսդրական փոփոխություն չձեռնարկել և ԱԻ ձեռք բերած արդյունքների պաշտպանությունը փորձել իրականացնել գործող օրենսդրություններում և նախադեպային իրավունքում առկա իրավական պաշտպանության կառուցակարգերով, այդ թվում՝ անբարեխիղճ մրցակցության, անհիմն հարստացման, արդյունաբերական դիզայնի, նոու հաուի, առևտրային գաղտնիքի անօրինական օգտագործումները արգելելու և այլ կառուցակարգերով⁶⁵: Միաժամանակ, ընդունվում է, որ այդ կառուցակարգերը բավարար պաշտպանություն չեն կարող ապահովել, քանի որ իրականում բարդ է բավարարել դրանց կիրառելիության բոլոր պայմանները ԱԻ ձեռք բերած արդյունքների նկատմամբ⁶⁶:

Ամփոփելով գտնում ենք, որ ԱԻ ձեռք բերած արդյունքի իրավական պաշտպանության տրամադրման հարցում գլոբալ ներդաշնակեցումը ցանկալի է: Ընդունելի և հնարավոր ենք համարում նման պաշտպանությունը հարակից իրավունքների ինստիտուտի շրջանակում նախատեսելը, սակայն մինչ այդ անհրաժեշտ է կատարել ապացույցների վրա հիմնված հետազոտություններ մի շարք ուղղություններով, այդ թվում՝ ԱԻ արդյունքներին իրավական պաշտպանություն տրամադրելու տնտեսական ազդեցության և օգուտների ու վնասների գնահատման, ինչպես նաև հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռման ուղղությամբ:

Բանալի բառեր - *արհեստական ինտելեկտ, արհեստական բանականություն, նյարդային ցանցեր, մեքենայական ուսուցում, մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք, հարակից իրավունքներ, յուրօրինակություն, մարդ-հեղինակ, տեղեկատվական տեխնոլոգիաներ*

ТАТЕВИК ДАВТЯН – *Возможность правовой защиты по результатам, полученным искусственным интеллектом, в рамках института смежных прав.* – В статье проанализировано, насколько целесообразно, возможно и допустимо предоставлять в рамках права интеллектуальной собственности правовую защиту по результатам, достигнутым так называемым автономным искусственным интеллектом. Речь идёт о произведениях искусства, литературы и науки, которые сопоставимы с произведениями, созданными человеком, а в отдельных случаях даже превосходят их. Обсуждается вопрос об обоснованности на данном этапе технологического развития обеспечивать подобные результаты правовой защитой, и если да, то можно ли обеспечить её в рамках института смежных прав. Анализируются основные положения дискуссий по этому вопросу в профессиональной литературе и высказанные специалистами предложения.

⁶⁵ St' u, օրինակ, AIPPI 2019-Study Question, նշվ. աշխ., էջ 5, 15; Tim W. Dornis, նշվ. աշխ., էջ 25-29:

⁶⁶ St' u Tim W. Dornis, նշվ. աշխ., էջ 25-29:

Ключевые слова: *искусственный интеллект, нейронные сети, машинное обучение, интеллектуальная собственность, авторское право, смежные права, оригинальность, человек-автор, информационные технологии*

TATEVIK DAVTYAN – *The Possibility of Legal Protection of Results Obtained by Artificial Intelligence Within the Framework of Related Rights* .-The article analyzes the feasibility and permissibility of providing legal protection for the results obtained by the so-called autonomous Artificial Intelligence in the framework of Intellectual Property Law. Those are results that are similar, comparable, and in some cases even superior to the works created by humans in the field of literature, art or science. It questions whether there is a substantiated need to provide legal protection for the results obtained by autonomous Artificial Intelligence systems at this stage of technological development, and if so, is it possible to provide such protection within the framework of the Concept of Related Rights. The basic provisions and suggestions in the professional literature on this issue are analyzed.

Key words: *artificial intelligence, neural networks, machine learning, intellectual property, copyright, related rights, originality, human authorship, information technology*

Ներկայացվել է՝ 14.10.2020,
Գրախոսվել է՝ 29.10.2020,
Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020